Անուշավան

Վարչական ղեկավար՝ Երվանդ Հակոբյան

Հեռ: 077 76 10 40

Մակերես՝ 11.34կմ²

Բնակչություն՝ 2120

Ինդեքս՝ 3008

aanushavani.gyuxapetaran@mail.ru



ՀՀ Շիրակի մարզի Անուշավան համայնքը գտնվում է Շիրակի մարզում՝ Արթիկ համայնքի վարչական շրջան է, Արթիկից գտնվում է 4.6 կմ հեռավորության վրա: Անուշավանը հիմնադրվելէ 18-րդ դարի երկրորդ կեսին՝ Ալաշկերտից և Բասենից գաղթածհայերի կողմից: Սկզբում անվանվել է Մուղալես, Բեքյանդ, Փոքր Պարնի 1966թ-ից՝ Անուշավան: Համայնքի վարչական տարածքը 1160 հա է, կլիմայական պայմանները՝ բարենպաստ, հացահատիկային, բանջար-բոստանային մշակաբույսերի և պտղի արտադրության համար: Գյուղի բնակչությունը 2021թ-ի հուլիսի 1-ի դրությամբ կազմում է 2130 մարդ: Անուշավանը գտնվում է հարթավայրում՝ ծովի մակարդակից 1750 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը՝ 600-700 մմ: Համայնքում գերակշռում են տափաստանային լանդշաֆտների լեռնային տարբերակները: Համայնքում կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ բարձրության և արտահայտվում են բարեխառն՝ երկարատև տաք ամառներով ու ցուրտ ձմեռներով: Համայնքի կլիման, թեև ընդհանուր առմամբ բարեխառն է, բայց աչքի է ընկնում ցամաքայնությամբ և ըստ բաձրության դառնում է ավելի խիստ: